ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց առաջնորդարանից (Սիդնեյ) ստացվեց մի հաղորդագրություն, որի մեջ հայտնում է, որ ս/թ. հունիսի 15-ին Կիպրոսի հույն եկեղեցու պետ Նորին ամենապատվությունն Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը, ընկերակցությամբ առաջնորդական փոխանորդ տ. Աղան ծ. վրդ. Պալիոզյանի և Գեորգ սրկ. Ջանոյանի, պաշտոնական

Նորին Ամենապատվությունն Տ. Խրիսոստոմոս արքեպիսկոպոսը, տ. Գարեգին եպս. Գազանճյանը և տ. Աղան ծ. վրդ. Պալիոզյանը

Տ. Խրիսոստոմոս Սրբազան արքեպիսկոպոսը ժամանեց Սիդնեյ՝ Ավստրալիայի հույն եկեղեցու առաջնորդ տ. Սթիլիանոս արքեպիսկոպոսի պաշտոնական և սիրալիր հրավերով, այցելելու համար Ավստրալիայի հունական և կիպրական գաղութին:

Այս բերեպատեհ առիթով նույն օրը այցելություն տվեց Սրբազան հյուրին:

Հայոց առաջնորդին և իր հետևորդներին տեղում դիմավորեց հույն եկեղեցու առաջնորդ սրբազան հայրը, որը պաշտոնապես ներկայացրեց հայ եկեղեցվո առաջնորդին Տ. Խրիսոստոմոս արքեպիսկոպոսին և նրա հետևորդներին:

Ամենապատիվ Սրբազան հյուրը ջերմ ու սիրալիր ընդունելությամբ պատվեց հայոց առաջնորդին ու իր բարձր ուշադրությանն արժանացրեց հայ եկեղեցու ներկայացուցիչներին:

Բարիգալստյան պաշտոնական խոսքեր փոխանակելուց հետո, մտերիմ զրույցի ժամանակ, Տ. Խրիստոստոմոս Սրբազանը խորը հիացումով արտահայտվեց հայ եկեղեցու և մասնավորապես նրա արժանավոր գահակալ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի արժանիքների մասին, որին հանդիպելու և ծանոթանալու պատեհությունը ունեցել է Մոսկվայում, Խաղաղության ժողովի ժամանակ:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Ս/թ. հունիսի 2—6-ը Ավստրալիայի Եկեղեցիների խորհուրդը Ատելեյտ քաղաքում գումարեց իր 29-րդ ընդհանուր ժողովը:

Ժողովին ներկա էին զանազան եկեղեցիների ու կազմակերպությունների ավելի քան 200 ներկայացուցիչներ:

Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը, որպես փոխնախագահներից մեկը, թեմական-պատգամավորական տարեկան ընդհանուր ժողովի պատճառով չկարողացավ ներկա գտնվել այդ ժողովին: Նրա փոխարեն ժողովին մասնակցեց առաջնորդական փոխանորդ տ. Աղան ծ. վրդ. Պոլիոզյանը, որին ընկերակցում էր Մելբուռնի հոգևոր հովիվ տ. Ներսես քհն. Գոոզյանը:

Ժողովն իր հնգօրյա աշխատանքների ընթացքում առավելապես զբաղվեց եկեղեցի և ընկերություն, հավատք, քույր եկեղեցիների փոխհարաբերություն և էկումենիկ հարցերով:

Հունիսի 2-ին, ուրբաթ օրը, տեղի է ունեցել եկեղեցական հատուկ արարողություն՝ էկումենիկ ոգով, Ատելեյտ անգլիկան ս. Պողոս եկեղեցում: